

Դու ի Տեառնէ առաքեցար  
 Ի գիրքս յովով աշխատեցար.  
 20 Մի նեղանար սիրուն եղբար,  
 Զմեզ միշտ յիշել տայ անդադար:  
 Յորժամ չուես ի Ստրմպաւէս,  
 Եւ հեռանաս յանարժանէս,  
 Առ քեզ լիցի սա յիշատակ,  
 25 ՅԱստուածատուր վարդապետէս:

Այս թուականէս յառաջ կամ յետոյ  
 գացած է նաեւ Հռոմ “առ պապն ֆռանկաց”,  
 ուր գրած է “սրբագրեալ ի գրոց հնոց”, Աղեք-  
 սանդրի վարուց երկրորդ օրինակ մ’ալ “ղար-  
 դարած ոսկւով եւ տնօրինականով եւ ոտա-  
 նաւորով”, եւ բերած է “ի Հայս ի պարգեւս  
 մեծ վարդապետին եւ քաջ վարդապետին իմոյ  
 Եսայայ”:

Ահա մեր բոլոր գիտցածը իր մասին: Մա-  
 հուան թուականն եւ այլ պարագայք կը մնան  
 հետեւաբար անստոյգ:

Անցնինք իր գրական գործոց:

\* \* \*

5. Գնունեաց եպիսկոպոսիս գրաւոր աշխա-  
 տութեանց վրայ խօսելու ժամանակ պէտք է  
 ծանրանալ ամէնէն յառաջ Աղեքսանդրի վա-  
 րուց խմբագրութեան վրայ: Այս մասին բաւա-  
 կանաչափ ճառած է արդէն Հ. Տաշեան իւր  
 մենագրութեան մէջ<sup>1</sup>: Կարեւորներն կը քաղենք  
 համառօտիւ:

<sup>1</sup> Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթ. վարուց  
 Աղեքսանդրի, էջ 85-136: